

ԳԻՏԱԿԱՆ ԵՍՏԱՇՐՋԱՆ՝ ԵՎԻՐՎԱԾ ԵՆՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ  
ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻՆ

1974 թ. հունվարի 15—16-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի, Սրբանի պետական համալսարանի և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան Մատենադարանի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված ականավոր բանաստեղծ Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին: Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա ասաց. Շնորհալին եղել է ժամանակի հայ իրականության ամենանշանավոր դեմքերից մեկը, որն իր կյանքը նվիրել է հայրենիքի ու ժողովրդի լուսավորության ու օտար լծից ազատագրության գործին: Այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը անդրադարձավ Ներսես Շնորհալու թագապետ երկնից և զարգուց նորաձև քերթվածին, որտեղ արծարծված են տիեզերագիտական-տոմարագիտական խնդիրներ:

Միջնադարի մեծ մտածողն ու բանաստեղծը՝ զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Ս. Նալբանդյանը: XI—XII դդ. հայ իրականության համառոտակի նկարագիրը տալուց հետո, զեկուցողը նշեց, որ XII դ. հայ գրականությունը թևակոխեց իր զարգացման նոր փուլը, որ բնութագրվում է աշխարհականացման պրոցեսի հետագա խորացմամբ, իրականության գեղագիտական ընկալման կայուն սկզբունքներով, գրականությունը կյանքին մերձեցնելու ակնհայտ ձգտումով, նրա թեմատիկ շրջանակների ընդլայնումով և բովանդակությունը նոր գծերով հարստացնելու միտումներով, հին գրական տեսակների զարգացմամբ ու նորերի ստեղծումով, պոետիկայի բազմազան նոր ձևերի յուրացումով: Գրականության այս նոր փուլի արտահայտությունը եղավ Շնորհալու ստեղծագործությունը, որով հայկական մշակույթի զարթոնքը ոչ միայն զարգացման նոր աստիճանի հասավ, այլև շատ բանով կանխորոշվեց նրա ընթացքը հետագա դարերում: Վ. Ս. Նալբանդյանը վերլուծեց Շնորհալու ստեղծագործությունը և ցույց տվեց, որ նա խոշոր ու ինքնատիպ գեղարվեստական անհատականություն է:

Բանասիրական գիտությունների թեկնածու Ղ. Վ. Այվազյանի զեկուցման թեման էր «Ներսես Շնորհալին որս գրականության մեջ»:

Կուցողը անդրադարձավ միջնադարի հայ բանաստեղծի գրական ժառանգության ուսուցանող թարգմանությունների ըստ ամենայնի բացահայտմանն ու այդ բնագավառի երախտավորների անուրանալի վաստակի ղնահատմանը:

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Շ. Մեռցակեյանը հանդես եկավ «Հայ գրականության աշխարհականացումը և Ներսես Շնորհալին» զեկուցմամբ: «Քրիստոնեական միջնադարը, — ասաց զեկուցողը, — որպես կանոն ձգտում էր զարգացնել հոգևոր դադափարները՝ ընդդեմ աշխարհիկ ըմբռնումների: Հակառակ այդ ձգտման, աշխարհիկ գաղափարներն, այնուամենայնիվ, տարբեր եղանակներով զգացնել էին տալիս իրենց գոյությունը: Ավելին, IX—X դդ. սկսած դրանք հայ իրականության մեջ աստիճանաբար ուժեղացան, կազմելով աշխարհիկ գրականության հատուկ թև: Աշխարհիկ թևին զուգընթաց, — այնուհետև նկատեց զեկուցողը, — հետևողական զարգացում և կերպարանափոխվում էր հոգևոր թևը: Աշխարհականանում էր պաշտոնական ողջ գրականությունը՝ յուրաքանչյուր թևում յուրատեսակ եղանակով: Այդ երևույթը համեմատաբար լիարժեք ծաղկում ապրեց Ներսես Շնորհալու ստեղծագործություններում՝ ձևավորելով և ավարտելով աշխարհականացման երևույթի առաջին փուլը: Դրա վառ ապացույցը բանաստեղծի «Ողբ Եզե-սիոյ», «Վիպասանութիւն» պոեմներն են, Ապիրատ իշխանին հղված չափածո նամակը, հանելուկները, որոշ խրատները և այլն, որոնց մեջ ընդգրկված են ժողովրդի կյանքի, բնության, հայրենի երկրի և ժամանակի իրականության զանազան կողմերը: Աշխարհիկ թևի ստեղծագործություններում շրջանառության մեջ են գրվել պոեզիայի բոլոր ժանրերը, սաղաչափական ձևերը, արվեստի հնարանքները, ինչպես նաև ժամանակի հայերենի ընձեռած լեզվա-ոճական հնարավորությունները: Դա մի նոր դարաշրջանի գրականություն էր, որը մայրուղի հանդիսացավ հաջորդ շրջանի բանաստեղծների համար:

Ներսես Շնորհալու նորահայտ տաղերը՝ զեկուցմամբ հանդես եկավ Ա. Մ. Քյոշկեյանը:

Ներսես Շնորհալու շափածո գործերի 1830 թ. վնեհտիկյան հրատարակության մեջ ընդգրկված է շուրջ 60 բանաստեղծություն: Հետագայում հայտնարեբվել են ևս մի քանի այլ տաղեր և հրատարակվել: Վերջերս Մաշտոցի անվան Մատենադարանի և արտասահմանում պահվող ձեռագրերում (XIII—XIV գդ. ընդօրինակություններ) հայտնարեբվել են Շնորհալու գրչին պատկանող մոտ 80 տաղային միավորներ: Հստ զեկուցողի, դրանք Շնորհալու գրչին վերագրելու հիմք են ծառայում իմաստային ծայրակապի առկայությունը և այն խորագրային նշումները, որոնք պահպանել են հեղինակի անունը՝ «Ներսէս կաթողիկոս» ձևով: Նորահայտ այդ տաղերը Շնորհալու հեղինակության դիտելու հիմք են նաև դրանց լեզվա-ոճական և տաղաչափական առանձնահատկությունները: Հաճախ վերոհիշյալ բոլոր տվյալները միասին են երևան դալիս և ավելի քան համոզիչ դարձնում այդ տաղերը Շնորհալուն պատկանելու իրողությունը: Ա. Մ. Քյոչկերյանը Շնորհալու տաղերը բաժանեց չորս խմբի և ընդգծեց, որ իրենց արվեստով, բանաստեղծական հնարաններով և նորույթներով դրանք ոչ միայն հարստացնում են եղածը, այլև լրացնում ու ճշգրտում են թերի ու աղճատված բնագրերը: Նորահայտ տաղերով հնարավոր է դառնում բացատրել Շնորհալու և առհասարակ գանձարանային տաղերին վերաբերող մի շարք հարցեր ու բացահայտել նրա դերը գանձարանային տաղերի՝ իրրև ժողովածուների առաջացման ու կազմավորման, ինչպես նաև տաղային ժանրի զարդացման գործում:

Իրավաբանական գիտությունների թեկնածու Խ. Ա. Քոռոսյանը զեկուցեց «Ներսես Շնորհալու հասարակական-քաղաքական գործունեությունը» թեմայով: Շնորհալու գործունեության շրջանում, — ասաց նա, — հայ ժողովրդի առաջ ծառայած հիմնական խնդիրներից էին ազգապահպանումը, ազգահավաքումը և հայկական պե-

տականության վերականգնումը: Շնորհալին ըմբռնեց այդ խնդիրները և որպես խոշոր մտավորական ու հասարակական-քաղաքական գործիչ իր գործունեությունը նպատակամղեց դրանց իրագործմանը:

«Ներսես Շնորհալու դիմանկարները հայկական մանրանկարներում» զեկուցմամբ հանգես եկավ արվեստագիտության թեկնածու Ա. Բ. Գևորգյանը: Նա նշեց, որ հայկական ձեռագրերում պահպանվել են Ներսես Շնորհալու նկարները, որոնք նրան պատկերում են որպես կաթողիկոս և հոգևոր առաջնորդ, բանաստեղծ. գրիչ, մանկավարժ և գիտնական: Չնայած Շնորհալու դիմանկարներն արված են նրա մահվանից բավականին հետո, սակայն արժեքավոր են, որովհետև դրանց մեկնաբանումը համոզում է կերպարի կոնկրետությունը:

Գիտական նստաշրջանում Ներսես Շնորհալուն նվիրված զեկուցումներով հանդես եկան նաև պատմական գիտությունների դոկտոր Ա. Գ. Գալստյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Ե. Լ. Նազարյանը, Մ. Թ. Ավդալբեկյանը, Գ. Ա. Հակոբյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Փ. Փ. Աճառյանը, Վ. Ս. Ներսիսյանը, Լ. Հ. Տեր-Պետրոսյանը, Մ. Ս. Մկրտչյանը, Ա. Ա. Ղազիբյանը, արվեստագիտության թեկնածու Ն. Կ. Թաֆավիզյանը և Ք. Ա. Տեր-Գալստյանը:

Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված միացյալ գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ՀԱՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Ս. Խաչիկյանը: Դրական գնահատելով նստաշրջանի արդյունքները, նա նշեց, որ անհրաժեշտ է ուսումնասիրել Ներսես Շնորհալու յեզուն, իմաստասիրական գործերը և ժամանակի հայ պոեզիայի վրա Շնորհալու թողած ազդեցության նշանակությունը:

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ